ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի հանրապետության Լոռու մարզ
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար, հեռ. 093344183
էլ. փոստ halavar.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 փետրվարի 2018 թվականի N 03-Ա

ԼՄ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, 41 հոդվածի 7-րդ կետով՝ հիմք ընդունելով Լոռու մարզպետի 08 փետրվարի 2018 թվականի թիվ 35-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հալավար համայնքի տարածքում 2018թ.-ի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

Հաստատել Հալավար համայնքի տարածքում 2018թ.-ի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

2018 թ. փետրվարի 27
գ. Հալավար

Հավելված
Հալավար համայնքի ղեկավարի
27 փետրվարի 2018թ.-ի թիվ 03-Ա որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

ԼՄ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

Հ/Հ	Միջոցառումների անվանումը	կատարող	Կատարման ժամկետը
1.	2.	3.	4.
	1. Կանխարգելիչ միջոցառումներ		
1.	ՈՒսումնասիրել և գնահատել գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը	Համայնքի ղեկավար	մինչև 15.03.2018թ.
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցներն ամրացնելու համար:		
3.	Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հուները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները		
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում շինարարական և դաշտային աշխատանքները կարգավորելու համար:		մշտապես
5.	Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով:	Համայնքի ղեկավար	մինչև 15.03.2018թ
	2. Հիմնական միջոցառումները		
6.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին	Համայնքի ղեկավար	մշտապես

7.	Տուժած շրջաններում հնարավորության սահմաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական և մաքրման աշխատանքներ	Համայնքի ղեկավարներ	ըստ անհրաժեշտության
8.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:	Համայնքի ղեկավարներ	ըստ անհրաժեշտության
9.	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	Տարահանման հանձնաժողովի նախագահ, համայնքների ղեկավար	Անհրաժեշտության դեպքում
10	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ), ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Համայնքների ղեկավարներ	Անհրաժեշտության դեպքում

Հալավար
համայնքի ղեկավար՝ Սարգիս Հակոբջանյան